

---

---

«ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում (ԼԻ) 2006 թ. ավանդույթ է դարձել հայ ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանին նվիրված «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտաժողովի կազմակերպումը: Այս տարի այն սկսվեց հունիսի 7-ին՝ Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Համբարձումյանի բացման խոսքով: Գիտաժողովին ներկա էր ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը, որն իր ելույթում մասնավորապես կարևորեց լեզվաբանության արդիական թեմաների ուսումնասիրության հարցը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին հունիսի 8-ին և 11-ին: Զեկուցումներ կարդացին ինչպես ինստիտուտի գիտաշխատողներ, այնպես էլ հանրապետության տարբեր բուհերի՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ), Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ), Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի (ԵՊԼՀ), Գյումրու Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի (ԳՄԻ), Գավառի պետական համալսարանի (ԳՊՀ), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) և Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) ներկայացուցիչներ:

ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ. Լ. Հովհաննիսյանը (ԼԻ) իր զեկուցման մեջ անդրադարձավ V դարի հայ մատենագրության մեջ օտար բառերի մեկնության հարցին՝ նշելով, որ դրանք «ստուգաբանության» նախնական փորձեր են՝ բառերի կամ բառաբաղադրիչների թարգմանություններ, հաճախ ժողովրդական ստուգաբանության ակնհայտ դրսևորումներ: Բայց քանի որ պատմական, բանասիրական, նաև լեզվաքերականական որոշակի արժեք են ներկայացնում, արժանի են համակարգային քննության: Ելնելով դրանից՝ նա, որոշ մեկնությունների և դրանց շուրջ հայ լեզվաբանության մեջ ծավալված դիտարկումների հիման վրա, առանձին դեպքերում նոր փաստերի միջոցով ներկայացրեց իր տեսակետները:

Բ. գ. դ. Վ. Համբարձումյանի (ԼԻ) զեկուցումը վերաբերում էր Ե. Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի անձանոթ ծագման և դժվար մեկնաբանելի կամ առայժմ չմեկնաբանված շուրջ մեկ տասնյակ բառերի (աղցաման «գիշերանոթ», թեսաղ «ժողով», հաս «ժամանակ, տարիք» և այլն) բառաքննական և ստուգաբանական վերլուծությանը: Զեկուցողը նշեց, որ, ըստ այդմ, համալրվում է կատարված ուսումնասիրությունների ցանկը: Բ. գ. դ. Լ. Հովսեփյանը (ԵՊՀ), հաշվի առնելով ավանդական և ժամանակակից մոտեցումները, «Գրաբարի հոլովատիպերի կառուցվածքային դասակարգում» զեկուցման շրջանակներում ներկայացրեց գրաբարի դասական շրջանի հոլովատիպերի միասնական հատկանիշներով դասակարգումը: Բ. գ. թ. Ն. Հովհաննիսյանը (ԼԻ) անդրադարձավ XVIII դ. ձեռագիր բառարաններում

արձանագրված, բայց և տպագիր բառարաններում չամրագրված մի շարք բառերի (ակնապուշել, փաստաբան, գրաստախել, մթնալուրթ, խստավզել և այլն) քննությանը:

Բ. գ. թ. Ս. Գրիգորյանը (ԼԻ) ներկայացրեց Գ. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորաբանությունները՝ նշելով, որ հայագիտությունը լուրջ քայլեր կարող է ձեռնարկել հին հայերենի ամբողջական համաբարբառ ունենալու համար, քանի որ ամեն մի բառ կարող է բավականաչափ տեղեկություն տալ արտալեզվական այն փոփոխությունների մասին, որոնց հետևանքով տեղի են ունենում բառիմաստի տեղաշարժ, փոփոխություն կամ նոր իմաստի ձեռքբերում:

Բ. գ. թեկնածուներ Օ. Խաչատրյանի (ԼԻ) և Ա. Մուրադյանի (ՀՊՄՀ) զեկուցումը նվիրված էր XIII դարի հեղինակ Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի նորաբանություններին: Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներենից թարգմանած բնագրի համաբարբառի հիման վրա նրանք ուսումնասիրել ու բացահայտել էին բառարաններում չվկայված շուրջ 70 բառ, կատարել բառակազմական և ձևաբանական վերլուծություն, որոշել բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները: Բ. գ. թ. Գ. Մխիթարյանի (ԼԻ) զեկուցումը վերաբերում էր Աստվածաշնչում հիշատակված հնագույն նվագարանների անվանումների քննությանը: Նպատակն էր բացահայտել ավանդաբար մեզ հասած հոգևոր, եկեղեցական երգերում հին և հնագույն շերտերի գոյությունը: Բ. գ. թ. Լ. Ավետիսյանը (ՀՊՄՀ) ներկայացրեց գրաբարյան բայական դարձվածքների՝ բառերի, բառաձևերի, շարահյուսական կառուցվածքի, բաղադրիչների քանակային և հնչունական մասնակի փոփոխություններով առկայացած տարբերակային ձևերը: Բ. գ. թ. Ս. Ավետյանը (ԵՊՀ) «Հնդեվրոպական լեզուներում բայարմատների կիրառությունը գործող անձի (nomen agentis) իմաստով» զեկուցման մեջ փորձեց բառավերջի նախկին հիմքակազմ ածանցների անկման հետևանքով առաջացած կազմությունները, որոնցում բայարմատները հանդես են գալիս որպես բարդության երկրորդ բաղադրիչ, սահմանազատել այն բարդություններից, որոնց երկրորդ բաղադրիչը սկզբից նեթ բայարմատ է եղել և որևէ հիմքակազմ ածանց չի պարունակել: Լ. Գուլգազարյանը (ԼԻ), քննության ենթարկելով «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, ինչպես նաև հաշվի առնելով բանասիրությանը հայտնի տեսակետներն ու տարբեր աղբյուրների որոշ վկայություններ, հանգեց այն եզրակացության, որ աշխատության հեղինակը VII դ. պատմիչ Մ. Կադանկատվացին է: Այս անդրադարձավ երկում առկա սխալներին, վրիպակներին, նաև Հայկազյան բառարանում չվկայված 45 բառերի քննությանը:

Բ. գ. թ. Ն. Պողոսյանը (ԵՊՀ), վկայելով, որ բառապաշարի նոր ու դեռևս չքննված տվյալներ են ամբարված հատկապես հայերենի վաղաշխարհաբարյան շրջանի ձեռագիր բառարաններում, ներկայացրեց երկու տարբեր ձեռագիր մատյանների կցագրված բառարաններում տեղ գտած, բայց և հայերենի զարգացման նախորդ փուլերի համեմատությամբ նոր իմաստներով առկայացած բառերը: Բ. գ. թ. Վ. Խաչատրյանի (ԼԻ) զեկուցումը նվիրված էր 1601–1640 թթ. ձեռագրերի հիշատակարաններում գործածված այն փոխառյալ բառերին, որոնք ավանդվել են միջինհայերենյան շրջանում և

հետազայում: Բ. գ. թ. Ա. Գալստյանը (ՀՊՄՀ) «Լեռ Կամուսարի օրագրությունների լեզվական հիմքերը» զեկուցման մեջ բացահայտեց հեղինակի օրագրությունների բառապաշարի ոճական շերտերը, լեզվական ամենաբնորոշ իրողությունները: Բ. գ. թ. Վ. Կատվայանի (ԳՊՀ) զեկուցումը վերաբերում է Բայազետի և Դիադինի բարբառների համեմատական քննությանը, հատկապես հնչյունական փոխհարաբերությունների ճշգրտմանը: Բ. գ. թ. Ջ. Բառնասյանը (ԼԻ) բարբառագիտական մենագրություններից, խոսվածքային միավորների գրանցումներից, բանահյուսական նմուշներից քաղած նյութերի հիման վրա ներկայացրեց անձնական և անդրադարձ դերանունների բարբառային դրսևորումները՝ ի հայտ բերելով հետաքրքիր իրողություններ: Բ. գ. թ. Ժ. Միքայելյանի (ԼԻ) զեկուցումը նվիրված էր Ագուլիսի և Ջուղայի բարբառներում բայի երկրորդական բաղադրյալ ժամանակներին: Հավաստելով, որ բարբառագետների կողմից երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը դեռևս բավարար չափով ուշադրության չեն արժանացել, հեղինակն արձանագրեց բավական ուշագրավ իրողություններ:

Բ. գ. թ. Հ. Մեսրոպյանը (ԼԻ), ուսումնասիրելով Մարիամ աստվածածնի պատվանունների բարբառային համարժեքները, նկատեց, որ հայերենի բարբառների և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցություններում հատկապես լայն գործառականություն ունի աստվածածին պատվանունը՝ բարբառային համապատասխան հնչատարբերակներով: Բ. գ. թ. Ա. Հանեյանի (ԼԻ) զեկուցումը նվիրված էր քամի հասկացության՝ հայերենի բարբառներում առկա բառադրսևորումներին: Ջեկուցողն անդրադարձավ դրանց ծագումնաբանությանը, բանիմաստային դրսևորումներին, հնչյունափոխությանը, բարբառային արտաբերումների նրբերանգներին և բառակազմական յուրահատկություններին: Ներկայացվեցին նաև փոխառյալ բառեր: Բ. գ. թ. Հ. Խաչատրյանը (ԼԻ), ուսումնասիրելով պատ և անկյուն հասկացությունների բարբառային անվանումները, նկատեց, որ միայն Ագուլիսի և Մեղրու խոսվածքներում է պահպանվել հնդեվրոպական ծագմամբ որմ (ուրման, հերմը) բառանունը, իսկ Ղարաբաղի բարբառում՝ անկյուն-ը: Մյուս վայրերում որմ-ի փոխարեն գործածվել են պատ, դուվար, իսկ անկյուն իմաստով՝ քունջ, պուճախ, քյոջա, բուրջ, ուլք և փոխառյալ այլ բառանուններ: Լ. Գևորգյանը (ԳՄԻ) մի շարք օրինակների միջոցով ներկայացրեց բաղադայինների հնչյունափոխական առանձնահատկությունները Շիրակի խոսվածքում: Ա. Մկրտումյանը (ՀՊՄՀ), քննելով դարձվածային հոմանիշները և դրանց կառուցվածքային տեսակները, դիտարկեց թվական+դերանուն, ածական + դերանուն, դերանուն+ դերբայ և այլ կաղապարներով դարձվածային միավորները՝ առանձին դեպքերում ասելիքը հիմնավորելով գծապատկերով:

Բ. գ. թ. Լ. Տեր-Գրիգորյանը (ՀՊՄՀ) անդրադարձավ պատկերային հիմքում դիմախաղ ունեցող դարձվածներին՝ վերջիններս բաժանելով երեք խմբի. ա) դեմքի արտահայտություն պատկերող դարձվածներ՝ քիթը բարձր, հոնքերը կախ և այլն, բ) դիմային շարժում ներկայացնող դարձվածներ՝ ատամները ցույց տալ, շրթունքը կծել և այլն, գ) դարձվածներ, որոնցում դիմախաղն ունի խորքային բնույթ՝ քթին բուրվատ տալ և այլն: Ռ. Դոխտյանը (ԵՊԼՀ) վերլուծության ենթարկեց այն բայերը, որոնք փոխաբերաբար

ասացական իմաստ ունեն, ինչպես՝ ամպրոպել, ժայթքել, ոռնալ, սղոցել և այլն: Տ. գ. թ. Ա. Մանուկյանը (ԼԻ), օգտագործելով բառերի սերման ապլիկատիվ քերականությունը, ներկայացրեց արդի հայերենում բայի առաջինից մինչև չորրորդ փուլի սերման կադայարները: Բ. գ. թ. Ա. Բարսեղյանի (ԼԻ) զեկուցումը վերաբերում էր ՁԼՄ-ների լեզվում բայի քերականական ձևերի՝ օտար լեզուների ազդեցությամբ, լեզվական և ոճական տարաբնույթ նորմերի թերիմացությամբ պայմանավորված ոչ ճիշտ կիրառություններին: Բ. գ. թ. Ա. Գալստյանը (ԼԻ), քննելով լեզվաբանական տերմինատարբերակները, դիտարկեց տերմինների հայերենացման հետևանքով առաջացած, ինչպես նաև ժխտման արտահայտության տարբեր ձևերով պայմանավորված տերմինային գուգաձևերը՝ առաջ քաշելով լեզվաբանական տերմինների մշակման, անհարկի բազմաձևությունների միօրինակացման խնդիրը:

Բ. գ. թ. Ս. Պապիկյանը (ԼԻ), անդրադառնալով ժամանակակից հայերենի կինոտերմինների ուսումնասիրությանը, ներկայացրեց դրանց զարգացման միտումները, տերմինահամակարգում առկա գուգահեռ ձևերը, տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Բ. գ. թ. Ն. Պետրոսյանը (ՀՊՃՀ) գիտատեխնիկական հայ բառարանագրության նորագույն շրջանում (XX դ. 20-ական թվականներից մինչ այսօր) մեքենագիտական-մեքենաշինական տերմինների՝ տասնամյակից տասնամյակ քանակական և որակական զարգացումներին համընթաց բառարանագրական իրողությունների քննությամբ փորձեց սահմանազատել մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգերի ձևավորման փուլերը՝ վերհանելով մասնագիտական բառարանագրության որոշ առանձնահատկություններ: Բ. գ. թ. Ռ. Ջուլֆայանը (ՀՊՄՀ), նշելով, որ տնտեսագիտությանն ու շուկայագիտությանը վերաբերող գրականությունը հիմնականում ստեղծվում է արտերկրում, վկայեց, որ թեև ներկայումս մեզանում տնտեսագիտական տերմինների շարքում փոխառությունները շատ են, սակայն դրանք հարաբերականորեն նվազում են, քանի որ աճում է սեփական նորակազմությունների թիվը: Այնուհետև բերեց օտար բառերին համարժեք նորակազմ տերմինների մի շարք օրինակներ՝ բառակազմական վերլուծությամբ: Բ. գ. թ. Ն. Սուքիասյանը (ԵՊԲՀ) ներկայացրեց բժշկագիտական լեզվի և ոճի, բժշկության մեջ ընդունված և տարածված տերմինների կանոնարկման սկզբունքները՝ ա) մասնագիտական բառապաշարի յուրացման ապահովում, բ) տեքստերի վերլուծությամբ բժշկագիտական լեզվին բնորոշ տիպական սխալների վերհանում, գ) ճյուղային տերմինարանների ստեղծում և այլն: Բ. գ. թ. Վ. Ներսիսյանը (ՀՊՄՀ) իր զեկուցման մեջ անդրադարձավ կարող եմ հարադրությանը՝ նշելով, որ այն գրական արևելահայերենում հանդես է գալիս իբրև մեկ ամբողջական, անտրոհելի լեզվական միավոր, ունի եղանակիչ բայի արժեք, ձևավորում է բաղադրյալ ստորոգյալ, նաև՝ իբրև վերաբերական խոսքի մաս՝ երկրայական նշանակությամբ:

Ընդունված կարգի համաձայն՝ գիտաժողովից հետո տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակում. հնչեցին տարբեր կարծիքներ, առանձին հարցերի շուրջ արվեցին որոշ դիտողություններ, եղան արժեքավոր առաջարկություններ: